



**ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ  
ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:  
ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ**

**Պատրաստված է**

**ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն  
հանձնակատարի հայաստանյան գրասենյակի պատվերով  
Երևան, Հայաստան**

**ԱՆԻ Դալլաքյան և Նարինե Հակոբյան  
Ավագ գիտաշխատողներ  
«Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոն  
Հայաստանի ամերիկյան համալսարան**

**Դոկտոր Լուսիկ Հ. Դանիելյան  
Տնօրեն  
«Թուրփանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոն  
Հայաստանի ամերիկյան համալսարան**

**Հոկտեմբեր 2008**

*Աշխատանքային վերնագիր՝ UNHCR-ի պատվերով ԹՀՀԿ/ՀԱՀ-ի կողմից կին փախստականների և  
ապաստան հայցողների նկատմամբ ՍԳԲ մասին հարցում*

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ: Արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական տեսակետների հետ:

## **Բովանդակություն**

Ամփոփում .....	5
Ներածություն .....	6
Մեթոդաբանություն .....	7
Հիմնական արդյունքները .....	9
Փախստականների փորձը .....	10
<i>Կյանքը հակամարտությունից առաջ.....</i>	10
<i>Հակամարտության պատճառով փախչելիս .....</i>	10
Սեռական և գենդերային բռնությունը տեղահանության ժամանակ.....	12
Հետկոնֆլիկտային սեռական և գենդերային բռնությունը Հայաստանում.....	14
<i>Հետկոնֆլիկտային բռնությունը քույրերի նկատմամբ.....</i>	16
Ընտանեկան բռնության չափերը.....	17
<i>Հարաբերությունները ներկա զուգընկերոջ հետ .....</i>	19
Վերաբերմունքը ընտանեկան բռնության նկատմամբ Հայաստանում .....	20
Գենդերային բռնության շարժառիթների ըմբռնման մակարդակը.....	22
Կին փախստականների և ապաստան հայցողների պարտադրված քայլերը .....	23
<i>Պարտադրված ամուսնություն .....</i>	23
<i>Պարտադրված արդրտ .....</i>	23
<i>Թրաֆիքինգ և պարտադրված մարմնավաճառություն .....</i>	24
<i>Երեխաներին լքելը .....</i>	24
<i>Ինքնասպանություն գործելը.....</i>	24
Կին փախստականների և ապաստան հայցողների խնդիրները Հայաստանում.....	24
<i>Դժվար հասանելի ծառայությունները .....</i>	24
<i>Կողմնապահությունը կին փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ.....</i>	25
<i>Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանությունը .....</i>	26
Հիմնական արդյունքների ամփոփում.....	27
Աղյուսակներ 1-68ա.....	30
Հավելված Ա. Հարցվածների հիմնական զբաղմունքները հակամարտությունից առաջ.....	74

## **Գծապատկերների ցանկ**

Գծապատկեր Ա. Տեղահանության ժամանակ ընտանիքից դուրս բռնության գործողությունների տոկոսները.....	13
Գծապատկեր Բ. Հայաստանում ընտանիքից դուրս բռնության գործողությունների տոկոսները.....	15
Գծապատկեր Գ. Ներկա անուսիմների կամ զուգընկերների կողմից բռնության գործողությունների տոկոսները.....	18
Գծապատկեր Դ. Կանանց խփելն արդարացնող հարցվածների տոկոսները.....	21
Գծապատկեր Ե. Դժվար հասանելի ծառայությունների տոկոսները.....	25

## Ամփոփում

Սեռական և գենդերային բռնությունը (ՍԳԲ) տարածված երևույթ է հակամարտությունների ժամանակ: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը պայմանագիր է կնքել Հայաստանի ամերիկյան համալսարանի Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնի հետ, որպեսզի վերջինս իրականացնի հարցում՝ կին փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ սեռական և գենդերային բռնությունը բացահայտելու, ինչպես նաև տեղահանության ժամանակ և հետո՝ Հայաստանում, այդ բռնության ձևերն ու տարածվածության աստիճանը պարզելու համար:

Կին փախստականների/ապաստան հայցողների տասնյոթ տոկոսը ենթարկվել է բռնության առնվազն մեկ գործողության ընտանիքից դուրս որևէ մեկի կողմից տեղահանության ժամանակ, ընդ որում տասը հարցվածներից մեկին կա՛մ սպառնացել են զենքով, կա՛մ զրկել են սննդից, ջրից կամ քնից, կա՛մ պահել են իր կամքին հակառակ: Տասն այդպիսի միջադեպերից ութի ժամանակ բռնացողներն անծանոթ անձինք էին: Հարցվածների մոտ 60 տոկոսն ունեցել է հոգեբանական դժվարություններ այդ բռնության հետևանքով, իսկ երեք հարցվածներից մեկը՝ ֆիզիկական վնասվածքներ:

Հայաստանում հաստատվելուց հետո կանանց մոտ չորս տոկոսը ենթարկվել է բռնության առնվազն մեկ գործողության ընտանիքից դուրս որևէ մեկի կողմից, ընդ որում այդ միջադեպերի 40 տոկոսի ժամանակ բռնացողները հարևաններն էին: Հայաստանում ընտանիքից դուրս անձանց կողմից բռնարարքների ենթարկված հինգ հարցվածներից չորսն ունեցել են հոգեբանական դժվարություններ, իսկ չորսից մեկը՝ ֆիզիկական վնասվածքներ:

Ամուսնացած կամ զուգընկեր ունեցող հարցվածների 17 տոկոսը ենթարկվել է հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բռնության առնվազն մեկ գործողության իր ներկա ամուսնու կամ զուգընկերոջ կողմից, ընդ որում յոթ տոկոսը ենթարկվել է ամեն օր կամ ամեն շաբաթ: Չորս հարցվածներից միայն մեկն է փորձել օգնություն ստանալ՝ իր ամուսնու կամ զուգընկերոջ դաժան վերաբերմունքի դեմ պայքարելու համար, և ամենաշատ դեպքերում այդ օգնության համար դիմել է ընտանիքի անդամներին:

Հինգ հիմնական պատճառները, որոնք հարցվածները նշել են որպես գենդերային բռնությունը բացատրող գործոններ, հետևյալն են. զուգընկերների կողմից թմրադեղերի և ալկոհոլի չարաշահումը, բռնարար տղամարդկանց լքել չցանկանալը կանանց կողմից, բռնարարների հոգեկան հիվանդ լինելը, կանանց և տղամարդկանց միջև անհավասար ուժերի հարաբերակցությունը և աղքատությունը:

Կին փախստականների/ապաստան հայցողների մեկ երրորդը դժվարություններ է ունեցել աշխատանք փնտրելիս իր կարգավիճակի պատճառով, իսկ 20 տոկոսը դժվարություններ է ունեցել նաև բժշկական օգնություն ստանալու ժամանակ: Տասը հարցվածներից մեկը համաձայնել է, որ իրեն չեն ընդունել այն աշխատանքի, որին նա դիմել էր, քանի որ նա փախստական է: Մեկ այլ տասից մեկը նշել է, որ իր երեխաների դասընկերները և ուսուցիչները կողմնապահ են նրանց նկատմամբ, քանի որ նրանք փախստական են:

Այդ կանանց մեկ երրորդը կարծում է, որ դժվարություններ ունի, քանի որ լավ չի տիրապետում հայերեն լեզվին: Հարցվածների 20 տոկոսը նշել է, որ հայ հասարակությունը բացասական վերաբերմունք ունի կին փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ, իսկ 30 տոկոսը կարծում է, որ կին փախստականները և ապաստան հայցողներն իրենց մեկուսացված են զգում Հայաստանում:

Կանանց գրեթե կեսը համաձայնել է, որ Հայաստանի կառավարությունը պաշտպանում է փախստականների և ապաստան հայցողների իրավունքները: Տասը հարցվածներից վեցը կարծում են, որ «միջազգային կազմակերպությունները բավարար ջանք չեն գործադրում՝ փախստականների և ապաստան հայցողների խնդիրները լուծելու համար»: Տասը հարցվածներից յոթը նկատել են, որ «Հայաստանի կառավարությունը բավարար ջանք չի գործադրում՝ փախստականների և ապաստան հայցողների խնդիրները լուծելու համար»: Հարցվածների կեսն ասել է, որ «մեր համայնքի ղեկավարը բավարար ջանք չի գործադրում՝ փախստականների և ապաստան հայցողների խնդիրները լուծելու համար»:

## **Ներածություն**

Հայաստանում գոյություն չունեն համակարգված և վստահելի տվյալներ սեռական և գենդերային բռնության (ՍԳԲ) վերաբերյալ: Անհրաժեշտ է համակարգված կերպով հավաքագրել մեր երկրում սեռական և գենդերային բռնության տարածվածության աստիճանի և ձևերի վերաբերյալ տվյալներ, որոնք իրենց հերթին կնպաստեն, որպեսզի մշակվեն բովանդակ ռազմավարություններ՝ այդպիսի բռնության դեմ պայքարելու համար: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը փաստեր ուներ, որ սեռական և գենդերային բռնության միջադեպեր են գրանցվել ներկայումս Հայաստանում բնակվող փախստականների և ապաստան հայցողների շրջանում, և որոշել է օժանդակել մի այնպիսի ուսումնասիրության իրականացմանը, որը կբացահայտեր սեռական և գենդերային բռնության միջադեպերի բնույթն ու չափերը:

Այդ սոցիալական խնդիրը քողարկված է և թերի է ուսումնասիրված Հայաստանում: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը պայմանագիր է կնքել Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնի (ԹՀՀԿ) հետ, որպեսզի վերջինս իրականացնի հարցում՝ կին փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ սեռական և գենդերային բռնությունը մանրամասն ուսումնասիրելու, ինչպես նաև այդ բռնության ձևերն ու տարածվածության աստիճանը պարզելու համար: Այս հարցումը տրամադրում է տեղեկատվություն, որը կօժանդակի ռազմավարությունների մշակմանը համապատասխան նախարարությունների և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ՝ նպատակ ունենալով ամբողջական կերպով լուծելու սեռական և գենդերային բռնության հիմնախնդիրները:

Այս հարցման նպատակն է բացահայտել սեռական և գենդերային բռնությունը կին փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ, ինչպես նաև հասկանալ այդ բռնության ձևերը, առանձնահատկություններն ու տարածվածության աստիճանը, այսինքն, սեռական և գենդերային բռնության միջադեպերը ընտանիքից դուրս անձանց կողմից տեղահանման ժամանակ, ընտանիքից դուրս անձանց կողմից Հայաստանում, ինչպես նաև ներկա անուսինների կամ զուգընկերների կողմից: Այն նաև նպատակ ունի պարզելու կին փախստականների և ապաստան հայցողների պարտադրված քայլերը և ունեցած խնդիրները Հայաստանում, ինչպես նաև հասկանալու կին փախստականների և ապաստան հայցողների ըմբռնումն ու վերաբերմունքը գենդերային բռնության նկատմամբ:

Սեռական և գենդերային բռնության սահմանումը, որն օգտագործվում է Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակի և իր գործընկերների կողմից, ընդգրկում է հետևյալ դրույթները<sup>1</sup>.

- այն ուղղված է որևէ մեկի դեմ՝ ելնելով նրա սեռից;
- այն ներառում է գործողություններ, որոնց արդյունքում տեղի է ունենում ֆիզիկական, հոգեկան կամ սեռական վնաս կամ ցավ;
- հիմնական գոհերը կանայք և աղջիկներն են:

Այդ սահմանումն ընդգրկում է ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, որը տեղի է ունենում «ընտանիքում», «լայն հասարակության մեջ» կամ իրականացվում է «պետության կամ հաստատությունների կողմից»:

## **Սեփողարանություն**

Հայաստանի 18-ից 75 տարեկան կին փախստականների և ապաստան հայցողների ներկայացուցչական ընտրանքն ստեղծելու համար ԹՀՀԿ-ն դիմել է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ՝ Հայաստանի կին փախստականների և ապաստան հայցողների տվյալների բազան տրամադրելու խնդրանքով: Այդ տվյալների բազան պարունակում էր տեղեկատվություն Ադրբեջանից և Իրաքից ժամանած փախստականների և ապաստան հայցողների վերաբերյալ:

Թիրախային բնակչությունը բաղկացած է 18-ից 75 տարեկան 2,024 կին փախստականներից և ապաստան հայցողներից՝ հետևյալ բաշխվածությամբ. 1,775 փախստական Ադրբեջանից, 246 փախստական Իրաքից և երեք ապաստան հայցող Իրաքից: Մեծ թվով փախստականներ և ապաստան հայցողներ ունեցող հինգ մարզերն են Երևանը, Արարատը, Կոտայքը, Սյունիքը և Տավուշը:

Թիրախային ընտրանքը կազմում էր 334 կին՝ 95 տոկոս վստահության մակարդակն ապահովելու համար: Ինչպես պարզվել է փորձարկման ժամանակ, տվյալների բազայում ընդգրկված բազմաթիվ կանայք այլևս չէին բնակվում նշված հասցեներում, և, հետևաբար, ԹՀՀԿ-ն իրականացրել է ընտրանքի լրացուցիչ փորձարկում և ճշտել չորս տարբեր մարզերի մոտ 150 գյուղաբնակ կանանց գտնվելու վայրը՝ որոշելու համար, թե որն է լինելու ընտրանքն ավելացնելու օպտիմալ տոկոսը: ԹՀՀԿ-ն կապվել է գյուղապետերի հետ և պարզել, որ կին փախստականների և ապաստան հայցողների ցանկն ունի մոտ 30 տոկոս անճշտություն:

Արդյունքում, ընտրանքն ավելացվել է մոտ 30 տոկոսով, և ընդհանուր հաշվով 500 կին է ընտրվել Հայաստանի ամբողջ տարածքով՝ հարցազրույցների նվազագույն թիվը (334) ապահովելու համար: Ընտրանքն ստեղծվել է՝ օգտագործելով տվյալների բազայում ընդգրկված բոլոր կանանց համակարգված պատահական ընտրանքի մեթոդը: Այդ 500 ընտրված կանանցից 442-ը փախստականներ էին Ադրբեջանից, 57-ը փախստականներ էին Իրաքից, և մեկ անձ ապաստան հայցող էր Իրաքից:

Ընտրանքի մեջ ընդգրկված բոլոր գյուղերի ղեկավարների հետ նախօրոք ճշտվել է, թե արդյոք ընտրված կին փախստականները և ապաստան հայցողները ներկայումս բնակվում են այդ գյուղերում:

---

<sup>1</sup> Այն հիմնված է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագրի կողմից ընդունված սահմանման վրա (տե՛ս 1993-ի դեկտեմբերի 20-ին 48/104 բանաձևով Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Հռչակագրի 1-ին և 2-րդ հոդվածները):

ԹՀՀ-ն ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի կողմից պահանջվող տեղեկատվության հիման վրա մշակել է չափորոշիչներ ու հատուկ այդ նպատակով կազմված հարցաթերթիկ: Չափորոշիչներ մշակելիս ԹՀՀ-ն փորձել է գտնել փախստականների նկատմամբ սեռական և գենդերային բռնության ոլորտում անցկացված համապատասխան հարցումներ, որոնք ունենան վստահելի և ճշգրիտ չափորոշիչներ<sup>2</sup>: Հարցաթերթիկի բոլոր չափորոշիչները փորձարկվել են, և արվել են համապատասխան շտկումներ:

Ընդհանուր հաշվով 2008-ի սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 12-ը անց է կացվել 392 դեմ առ դեմ հարցազրույց: Այդ 392 հարցվածներից 355-ն Ադրբեյջանից էին, իսկ 37-ը՝ Իրաքից: Այլուսակներ 1, 2 և 3-ը ցույց են տալիս անցկացված հարցազրույցների թիվը՝ մարզային կտրվածքով, ինչպես նաև քաղաքային և գյուղական ընտրանքներում ընդգրկված տնային տնտեսությունների թիվը: Ըստ անհրաժեշտության՝ որակական տվյալները կողավորվել են, և բոլոր տվյալները մուտքագրվել եր SPSS (վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար) վերլուծության համար:

ԹՀՀ-ի հարցազրուցավարները չեն կարողացել գտնել ընտրանքի մեջ ընդգրկված 77 կանանց, երբ փորձել են գտնել նրանց ըստ տվյալների բազայում գրանցված հասցեների: ԹՀՀ-ի կողմից ձեռք բերված տեղեկատվության համաձայն՝ այդ 77 ընտրված կանանց 22 տոկոսը ներկայումս բնակվում է մեկ այլ քաղաքում կամ գյուղում, իսկ 19 տոկոսի հասցեները սխալ են գրանցված տվյալների բազայում: Եվս 19 տոկոսի գտնվելու վայրը ոչ մեկին հայտնի չէ: Տասնութ տոկոսը երկրից դուրս է: Մերժման տոկոսը չորս է:

Հարցազրույցներն անց են կացվել հարցման մասնակիցների կողմից նախընտրած լեզվով: Հարցաթերթիկի հայերեն տարբերակին զուգահեռ պատրաստվել են ռուսերեն և անգլերեն տարբերակները, որոնք օգտագործվել են անհրաժեշտության դեպքում:

Հարցվածները տեղեկացվել են, որ պատասխանների անանունությունը երաշխավորվում է: Ի լրումն, հարցազրույցների սկզբում հարցվածներից ցույց են տրվել հարցաթերթիկները՝ նրանց հավաստիացնելու համար, որ իրենց անունները կամ հասցեները ոչ մի տեղ չեն գրանցվում:

Հարցազրուցավարները գրանցել են նաև հարցազրույցն այլ անձանց ներկայությամբ անցկացնելու հանգամանքը: Հարցազրույցների 64 տոկոսն անցկացվել է առանց ուրիշ անձանց ներկայության: Հարցազրույցների ութ տոկոսը անցկացվել է հարցվածների ամուսինների կամ զուգընկերների ներկայությամբ: Հարցազրույցների մոտ 12 տոկոսի ժամանակ ներկա են եղել տնային տնտեսության այլ մեծահասակ անդամներ, իսկ հարցազրույցների ինը տոկոսի դեպքում ներկա են եղել երեխաները:

Այս հարցման տվյալների հավաքագրման ժամանակ ԹՀՀ-ն օգտագործել է և՛ դեմ առ դեմ հարցազրույցներ, և՛ ինքնուրույն լրացման քարտեր: Հարցազրույցների ժամանակ հարցվածներին տրվել են քարտեր՝ դրանք ինքնուրույն լրացնելու համար: Այդ ինքնուրույն լրացման քարտերը ներառում էին բռնության ու ճնշումների որոշակի գործողություններ, և այդ գործողություններից յուրաքանչյուրի դեպքում հարցվածներին խնդրել են նշել, թե ինչ հաճախականությամբ են իրենք ենթարկվել այդպիսի բռնության և ճնշումների: ԹՀՀ-ն հաջողությամբ է օգտագործել այս մեթոդը զգայուն հարցեր հետազոտող իր նախկին ուսումնասիրությունների ժամանակ, և, ինչպես և ակնկալվում էր, այս հարցման ժամանակ

<sup>2</sup> Տե՛ս Հակամարտությունների ժամանակ փախստականների վերարտադրողական առողջության (ՀՓՎԱ) դաշինք (2004) «Գենդերային բռնության չափման ձեռնարկ՝ հակամարտությունների վայրերում բռնության բացահայտման, ծրագրի մշակման, վերահսկման և գնահատման համար»: Նյու Յորք, ՆՅ: ՀՓՎԱ:



նույնպես այն ապացուցեց իր արդյունավետությունը: Ինքնուրույն լրացման քարտերը վեր հանեցին բռնության այնպիսի միջադեպեր, որոնց մասին հարցվածները, հնարավոր է, որ կամաչեին հայտնել բարձրաձայն: Ի լրումն, որոշ դեպքերում հարցազրույցները հնարավոր չէր անցկացնել առանձին, և ինքնուրույն լրացման քարտերն այդպիսի դեպքերում լավ հնարք էր խնդիրների մասին իմանալու համար:

Հարցազրույցների վերջում հարցման մասնակիցներին տրամադրվել են սեռական և գենդերային բռնության մասին տեղեկատվական թերթիկներ և թեժ գծի հեռախոսահամարը:

## **Հիմնական արդյունքները**

Այս բաժինն ամփոփում է հարցման արդյունքները և բաղկացած է ութ ենթաբաժիններից. փախստականների փորձը, սեռական և գենդերային բռնությունը տեղահանության ժամանակ, հետկոնֆլիկտային սեռական և գենդերային բռնությունը Հայաստանում, ընտանեկան բռնության չափերը, Հայաստանում ընտանեկան բռնության նկատմամբ վերաբերմունքը, գենդերային բռնության շարժառիթների ըմբռնման մակարդակը, կին փախստականների և ապաստան հայցողների պարտադրված քայլերը և կին փախստականների և ապաստան հայցողների խնդիրները Հայաստանում:

Հարցվածների միջին տարիքը 47 էր (տե՛ս Աղյուսակ 59): Հարցվածների մոտ 55 տոկոսն ավարտել է 10-ամյա միջնակարգ դպրոց, 45 տոկոսը հաճախել է կամ ավարտել է համալսարան, քոլեջ/ուսումնարան կամ տեխնիկում<sup>3</sup> (տե՛ս Աղյուսակ 60): Հարցվածների 25 տոկոսն աշխատում էր լրիվ կամ կես դրույքով, ներառյալ ինքնազբաղվածությունը (տե՛ս Աղյուսակ 61): Հարց է տրվել նաև տնային տնտեսության նախորդ ամսվա ընդհանուր եկամտի մասին<sup>4</sup>, և նշված գումարը կազմել է 1,700-ից մինչև 600,000 ՀՀ դրամ՝ միջին հաշվով 65,375<sup>5</sup> ՀՀ դրամ՝ մեկ տնային տնտեսության հաշվարկով (տե՛ս Աղյուսակ 62):

Երևանի բոլոր բնակիչներն ավելի կրթված են և տնային տնտեսության առումով ունեն ավելի բարձր եկամուտ, քան մարզերի քաղաքների բնակիչները: Նույն տարբերությունը նկատելի է քաղաքային և գյուղական բնակիչների միջև:

Հարցվածների 33 տոկոսն իր տնային տնտեսության գլխավորն<sup>6</sup> էր (տե՛ս Աղյուսակ 63):

Հարցվածների 52 տոկոսն ամուսնացած էր, մինչդեռ 20 տոկոսը երբեք ամուսնացած չի եղել, իսկ 18 տոկոսն այրի էր: Ութ տոկոսն ամուսնալուծված էր (տե՛ս Աղյուսակ 64): 205 ամուսնացած կանայք այդ կարգավիճակում են, միջին հաշվով, 25 տարի (տե՛ս Աղյուսակ 64ա):

Ամուսնացած հարցվածների 95 տոկոսը հայտնել է, որ իր ամուսինն ապրում է իր հետ նույն տնային տնտեսությունում (տե՛ս Աղյուսակ 65): Հարցվածների հետ չբնակվող ամուսինները բացակայում են, միջին հաշվով, հինգ տարի:

<sup>3</sup> Կրթական մակարդակի հիման վրա վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ գտնելու նպատակով այդ չափորոշիչը կողավորվել է երկու կատեգորիայի. դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածներ և դպրոցից հետո ոչ մի ուսումնական հաստատություն չավարտած հարցվածներ:

<sup>4</sup> Ներառյալ բոլոր աշխատավարձերը, ինքնազբաղվածությունից և այլ աղբյուրներից ստացված եկամուտները, թոշակները և ընկերներից, բարեկամներից և պետությունից ստացված օգնությունը, 2008-ի օգոստոսին:

<sup>5</sup> Միջին փոխարժեքը 2008-ի օգոստոսին՝ 302 ՀՀ դրամ = 1 ԱՄՆ դոլար:

<sup>6</sup> Սահմանումը՝ տնային տնտեսությունում բոլոր հիմնական որոշումների համար պատասխանատու անձը:

Հարցվածների մոտ 78 տոկոսը երեխաներ ունի (տե՛ս Աղյուսակ 66), որոնց տարիքը տատանվում է մեկ ամսականից մինչև 57 տարեկան՝ միջին հաշվով 25 տարեկան: Հարցվածների չորս տոկոսը վերջին տարվա ընթացքում հղի է եղել (տե՛ս Աղյուսակ 67):

Հարցվածների մոտ 11 տոկոսը հաշմանդամ էր, և հաշմանդամների 51 տոկոսը հայտնել է, որ ստանում է հաշմանդամության նպաստ կառավարության կողմից (տե՛ս Աղյուսակներ 68 և 68ա):

Տվյալների մեծ մասի համար օգտագործվել են վիճակագրական թեստեր՝ պարզելու համար, թե արդյոք գոյություն ունեն տարբերություններ քաղաքների և գյուղերի, երևանի և տասը մարզերի քաղաքների բնակիչների միջև, ինչպես նաև տարբերություններ՝ այսօրվա մարզերի, զբաղվածության կարգավիճակով, եկամտի չափով, կրթական մակարդակով և հաշմանդամության կարգավիճակով: Եթե վիճակագրական տեսանկյունից նշանակալի արդյունքներ գոյություն ունեն, ապա դրանք ընդգրկված են վերլուծության այս բաժնում:

### ***Փախստականների փորձը***

Մի քանի հարցի օգնությամբ փորձ է արվել հասկանալու կին փախստականների և ապաստան հայցողների կյանքը հակամարտությունից առաջ: Այդ հարցերը տրվել են հարցման բոլոր մասնակիցներին, ովքեր փախել են Իրաքից հակամարտության պատճառով, անկախ նրանց տարիքից: Սակայն հակամարտության պատճառով Ադրբեջանից փախած հարցվածներին այդ հարցերն տրվել են միայն այն դեպքում, եթե նրանք 30 տարեկան կամ բարձր էին հարցման պահին՝ համոզվելու համար, որ իրենք առնվազն 10 տարեկան են եղել այն ժամանակ, երբ բռնի տեղահանվել են:

Արդյունքում, բոլոր 392 հարցվածների միայն մոտ 86 տոկոսն է (n=335) պատասխանել փախստականների և ապաստան հայցողների փորձի վերաբերյալ հարցերին:

#### *Կյանքը հակամարտությունից առաջ*

Այդ 335 հարցվածների 73 տոկոսը ծնվել է Ադրբեջանում, 11 տոկոսը՝ Իրաքում, մոտ ութ տոկոսը՝ Հայաստանում, և մեկ այլ ութ տոկոսը՝ Լեռնային Ղարաբաղում (տե՛ս Աղյուսակ 4):

Այդ հարցվածների 76 տոկոսը քաղաքում էր բնակվում հակամարտությունից առաջ, մոտ վեց տոկոսը՝ ավանում, և մոտ 18 տոկոսը՝ գյուղում (տե՛ս Աղյուսակ 5):

Հարցվածների մոտ 19 տոկոսը տնային տնտեսուհի էր հակամարտությունից առաջ, մինչդեռ գրեթե 14 տոկոսը՝ աշակերտ կամ ուսանող: Մյուս երեք զբաղմունքները, որոնք հարցվածներն ունեցել են հակամարտությունից առաջ, գործարանում աշխատելն է (13 տոկոս), դասավանդելը (10 տոկոս) և հաշվապահությունը (հինգ տոկոս) (տե՛ս Հավելված Ա-ն նշված բոլոր զբաղմունքների ցանկով):

#### *Հակամարտության պատճառով փախչելիս*

Ադրբեջանից փախստական հարցվածների 72 տոկոսը լքել է իր տունը հակամարտության պատճառով 1988-ին, իսկ մոտ 20 տոկոսը՝ 1989-ին:

Իրաքից փախստական հարցվածների 35 տոկոսը փախել է հակամարտության պատճառով 2006-ին, մոտ 19 տոկոսը՝ 2004-ին, և գրեթե 14 տոկոսը՝ 2007-ին:

Այն հարցին, թե ինչ երթուղի են օգտագործել Ադրբեջանը կամ Իրաքը լքելիս, հարցվածները նշել են հակամարտության երկրից դեպի Հայաստան կա՛մ ուղիղ գալու, կա՛մ անուղղակի հասնելու՝ հակամարտության երկրում և Հայաստանում այլ քաղաքներ և գյուղեր անցնելով, կա՛մ որևէ տարանցիկ երկրով անցնելու մասին: Ադրբեջանից փախստական հարցվածների 36 տոկոսը (n=108) և Իրաքից փախստական հարցվածների մոտ 11 տոկոսը (n=4) իրենց բնակավայրից հակամարտության երկրում ուղիղ եկել են Հայաստան՝ իրենց ներկա բնակավայրը (տե՛ս Աղյուսակներ 6ա և 6բ):

Ադրբեջանից Հայաստանում իր ներկա բնակավայրն անմիջապես ժամանած հարցվածների մեծամասնությունը (42 տոկոս) հակամարտությունից փախչելուց օգտագործել է ինքնաթիռ, 25 տոկոսն օգտագործել է զնացք, 19 տոկոսը՝ ավտոմեքենա, իսկ յոթ տոկոսը՝ բեռնատար ավտոմեքենա (տե՛ս Աղյուսակ 7ա): Իրաքից Հայաստանում իր ներկա բնակավայրն անմիջապես ժամանած հարցվածների կեսն օգտագործել է ինքնաթիռ, մինչդեռ մյուս կեսը՝ ավտոմեքենա (տե՛ս Աղյուսակ 7բ):

Ադրբեջանից հարցվածների մոտ 49 տոկոսը (n=145) եկել է իր ներկա բնակավայրը Հայաստանում՝ անցնելով այլ բնակավայրերով. այդ հարցվածները փախել են հակամարտությունից կա՛մ անցնելով Ադրբեջանի մեկ այլ քաղաքով կամ գյուղով, կա՛մ մինչ իրենց ներկա բնակավայրը ժամանելն անցել են Հայաստանի մեկ այլ քաղաքով կամ գյուղով (տե՛ս Աղյուսակ 6ա): Այդ հարցվածների կեսից մի փոքր ավելին (53 տոկոս) օգտագործել է ավտոմեքենա, 26 տոկոսը՝ ինքնաթիռ, իսկ ինը տոկոսը՝ ավտոբուս (տե՛ս Աղյուսակ 8ա օգտագործված բոլոր տրանսպորտային միջոցների ցանկով): Իրաքից հարցվածներից միայն մեկն է ժամանել իր ներկա բնակավայրը Հայաստանում՝ անցնելով այլ բնակավայրեր թե՛ Իրաքում, թե՛ Հայաստանում, և նա օգտագործել է ինքնաթիռ, ավտոբուս և ավտոմեքենա՝ Հայաստան ժամանելու համար (տե՛ս Աղյուսակներ 6բ և 8բ):

Ադրբեջանից հարցվածների 15 տոկոսը (n=45) և Իրաքից հարցվածների մոտ 87 տոկոսը (n=32) ժամանել են Հայաստան՝ անցնելով տարանցիկ երկրներով (տե՛ս Աղյուսակներ 6ա և 6բ): Ի լրումն, Ադրբեջանից ժամանած այդ 45 հարցվածներից չորսը փոխել են երկու տարանցիկ երկիր մինչ Հայաստան հասնելը: Ադրբեջանից Հայաստան տարանցիկ երկրով ժամանած հարցվածների մոտ 37 տոկոսն օգտագործել է զնացք այն պահից, երբ փախել է հակամարտության պատճառով, մինչ տարանցիկ երկրով Հայաստան հասնելը, 35 տոկոսն օգտագործել է ինքնաթիռ, իսկ 18 տոկոսը՝ ավտոմեքենա (տե՛ս Աղյուսակ 9ա):

Իրաքից Հայաստան տարանցիկ երկրով ժամանած հարցվածների կեսից մի փոքր ավելին (52 տոկոս) օգտագործել է ինքնաթիռ, 29 տոկոսն օգտագործել է ավտոմեքենա, իսկ 20 տոկոսը՝ ավտոբուս (տե՛ս Աղյուսակ 9գ):

Ադրբեջանից տեղահանված հարցվածների մեծամասնությունը ժամանել է Հայաստան՝ անցնելով Ռուսաստանի (59 տոկոս) կամ Վրաստանի (29 տոկոս) տարածքով: Հակամարտության պատճառով Իրաքից փախած հարցվածների մեծ մասը (91 տոկոս) անցել է Սիրիայի տարածքով՝ Հայաստան հասնելու համար (տե՛ս Աղյուսակ 9բ և Աղյուսակ 9դ տարանցիկ երկրների ցանկերով):

Այն հարցին, թե Հայաստանի որ բնակավայրն է առաջինը ժամանել, տեղահանված հարցվածների մոտ 75 տոկոսը նշել է Երևանը: Այնուհետև նշվել են Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի քաղաքներն ու գյուղերը (տե՛ս Աղյուսակ 10 Հայաստանի այն բոլոր բնակավայրերի ցանկով, որտեղ հարցվածներն առաջինն են ժամանել):

## **Սեռական և գենդերային բռնությունը տեղահանության ժամանակ**

Կին փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ սեռական և գենդերային բռնության չափերը պարզելու նպատակով դեմ առ դեմ հարցազրույցների ժամանակ հարցվածներին տրվել են երեք քարտեր՝ դրանք ինքնուրույն լրացնելու համար:

Առաջին քարտը պարունակում էր հարցեր, որոնց նպատակն էր բացահայտել, թե արդյոք հարցվածները ենթարկվել են բռնության տարբեր գործողությունների այն ժամանակահատվածում, երբ հակամարտության պատճառով փախել են իրենց ծննդավայրից և ժամանել Հայաստան: Այդ հարցն առնչվում էր այն գործողություններին, որոնք իրականացվել են հարցվածների ընտանիքից դուրս անձանց կողմից, ինչպես օրինակ՝ զինվորների, ոստիկանության և սահմանապահների կողմից, և այդ գործողությունները կարող էին տեղի ունենալ այնպիսի վայրերում, ինչպիսիք են՝ ճանապարհին, փախստականների ճամբարում կամ մեկ այլ քաղաքում կամ գյուղում:

Ինքնուրույն լրացման առաջին քարտի հարցերը տրվել են հակամարտության պատճառով Ադրբեյջանից փախած միայն այն հարցվածներին, ովքեր հարցման պահին 30 տարեկան կամ բարձր էին, կամ ովքեր առնվազն 10 տարեկան են եղել Ադրբեյջանից հակամարտության պատճառով փախչելու ժամանակ: Իրաքից փախած 18-ից 75 տարեկան բոլոր փախստականները և ապաստան հայցողներն ընդգրկվել են հարցման այս մասում:

Այդ բոլոր հարցվածների 17 տոկոսը (n=57) ենթարկվել է բռնության առնվազն մեկ գործողության ընտանիքից դուրս որևէ մեկի կողմից տեղահանության<sup>7</sup> ժամանակ (տե՛ս Աղյուսակներ 11 և 11ա): Այդ բոլոր հարցվածների չորս տոկոսը հայտնել է, որ տեղահանության ժամանակ ենթարկվել է առնվազն մեկ այդպիսի գործողության ամեն օր կամ ամեն շաբաթ:


Ադրբեյջանից հարցվածների 17 տոկոսը և Իրաքից հարցվածների մոտ 14 տոկոսը հայտնել են, որ տեղահանության ժամանակ ենթարկվել են բռնության առնվազն մեկ գործողության ընտանիքից դուրս անձանց կողմից: Միայն Ադրբեյջանից հարցվածներն են (հինգ տոկոս) ենթարկվել այդպիսի գործողությունների ամեն օր կամ ամեն շաբաթ:

Հարցվածների ինը տոկոսը նկատել է, որ հակամարտության պատճառով փախչելու ժամանակ իրեն սպառնացել են ինչ-որ տեսակի զենքով առնվազն մեկ անգամ, ընդ որում երկու տոկոսն ասել է՝ ամեն օր կամ ամեն շաբաթ: Հարցվածների ութ տոկոսը հայտնել է, որ իրեն զրկել են սննդից, ջրից կամ քնից առնվազն մեկ անգամ, ընդ որում երեք տոկոսը զրկվել է ամեն օր կամ ամեն շաբաթ: Հարցվածների յոթ տոկոսը մատնանշել է, որ հակամարտության պատճառով փախչելու ժամանակ իրեն պահել են իր կամքին հակառակ առնվազն մեկ անգամ, ընդ որում մոտ մեկ տոկոսը ենթարկվել է այդպիսի գործողության ամեն օր կամ ամեն շաբաթ:

Հարցվածների հինգ տոկոսը հայտնել է, որ հակամարտության պատճառով փախչելու ժամանակ իրեն խփել կամ ապտակել են առնվազն մեկ անգամ, իսկ մոտ չորս տոկոսի հասցեին հնչել են անվայել սեքսուալ մեկնաբանություններ առնվազն մեկ անգամ: Գծապատկեր Ա-ն ներկայացնում է տեղահանության ժամանակ առնվազն մեկ անգամ տեղի ունեցած ընտանիքից դուրս բռնության գործողությունների գումարային տոկոսները:

<sup>7</sup> «Տեղահանությունը» ենթադրում է, որ որևէ մեկին կամ որևէ անձանց իրենց տնից կամ բնակավայրից բռնի տեղահանել են, և այն կարող է փոխարինվել «բռնի միգրացիա» կամ «բռնի տեղահանություն» արտահայտություններով:

**Գծապատկեր Ա. Տեղահանության ժամանակ ընտանիքից դուրս բռնության գործողությունների տոկոսները**



Եթե հարցվածները «երբեք» պատասխանից բացի նշել են այլ տարբերակներ տեղահանության ժամանակ տեղի ունեցած բռնության գործողություններ թվարկող ինքնուրույն լրացման քարտում, ապա նրանց տրվել են մի քանի լրացուցիչ հարցեր՝ բացահայտելու համար, թե ովքեր են եղել բռնացողները, արդյոք հարցվածներն ունեցել են վնասվածքներ դաժան վերաբերմունքի պատճառով, և, եթե ունեցել են, արդյոք դիմել են բժշկական օգնության այդ վնասվածքների պատճառով:

Տեղահանության ժամանակ ընտանիքից դուրս անձանց կողմից բռնության առնվազն մեկ գործողության ենթարկված հարցվածների մոտ 83 տոկոսը հայտնել է, որ չի ճանաչում բռնարարներին, իսկ մոտ յոթ տոկոսն ասել է, որ բռնացողները զինվորներն էին (տե՛ս Աղյուսակ 12): Աղբյուրից հարցվածներն են միայն նշել, որ բռնարարները զինվորներն էին:

Տեղահանության ժամանակ ընտանիքից դուրս անձանց կողմից բռնության առնվազն մեկ գործողության ենթարկված հարցվածների մոտ 60 տոկոսն արդյունքում ունեցել է հոգեբանական դժվարություններ: Այնուհետև նշվել են կապտուկներ, քերծվածքներ, վերքեր (26 տոկոս), խորը վերքեր կամ կտրվածքներ (18 տոկոս), գիտակցության կորուստ (16 տոկոս) և հողախախտումներ (12 տոկոս) (տե՛ս Աղյուսակներ 13 և 13ա): Ընդհանուր առմամբ, բռնության ենթարկված հարցվածների մոտ 32 տոկոսն ունեցել է ինչ-որ տեսակի ֆիզիկական վնասվածքներ:

Դաժան վերաբերմունքի պատճառով վնասվածքներ ստացած հարցվածների մոտ 21 տոկոսը դիմել է բժշկական օգնության (տե՛ս Աղյուսակ 14): Բժշկի կամ հիվանդանոց չդիմած հարցվածների մոտ 26 տոկոսը բացատրել է, որ չի դիմել բժշկական օգնության, քանի որ չի համարել այն լուրջ խնդիր: Տասնինը տոկոսը հայտնել է, որ չկար որևէ մեկը, ում կարող էր դիմել օգնության համար: Տասնվեց տոկոսը չգիտեր, թե որտեղ կարելի է դիմել: Մոտ 13 տոկոսը չէր հավատում, որ որևէ մեկը կարող էր օգնել: Մոտ 10 տոկոսը ժամանակ չուներ բժշկական օգնության դիմելու համար (տե՛ս Աղյուսակ 15):

### ***Հետևող ֆիզիկոսային սեռական և գենդերային բռնությունը Հայաստանում***


Ինքնուրույն լրացման երկրորդ քարտը հարցնում էր ֆիզիկական և սեռական բռնության այն գործողությունների մասին, որոնց կին փախստականները և ապաստան հայցողները ենթարկվել են Հայաստանում՝ այն պահից, երբ նրանք ժամանել են Հայաստան, մինչև հիմա: Այն առնչվում էր այն գործողություններին, որոնք իրականացվել են հարցվածների ընտանիքից դուրս անձանց կողմից, ինչպես օրինակ՝ ոստիկանության, զինվորների, բարեգործական կազմակերպությունների անդամների կամ հարևանների և այլոց կողմից:

Հարցվածների մոտ չորս տոկոսը (n=14) ենթարկվել է քարտում նշված բռնության առնվազն մեկ գործողության ընտանիքից դուրս անձանց կողմից Հայաստանում՝ այն պահից, երբ ժամանել է, մինչև հիմա (տե՛ս Աղյուսակներ 16 և 16ա): Միայն մեկ հարցված է հայտնել, որ ենթարկվել է առնվազն մեկ այդպիսի գործողության ամեն օր կամ ամեն շաբաթ:

Հարցվածների մոտ երկու տոկոսը նշել է, որ Հայաստանում ընտանիքից դուրս անձինք իրեն պահել են իր կամքին հակառակ առնվազն մեկ անգամ: Հարցվածների մեկ այլ երկու տոկոսը հայտնել է, որ իր հասցեին հնչել են անվայել սեքսուալ մեկնաբանություններ առնվազն մեկ անգամ: Հարցվածների մեկ տոկոսին իր ընտանիքից դուրս անձինք խփել կամ ապտակել են առնվազն մեկ անգամ Հայաստանում:

Գծապատկեր Բ-ն ներկայացնում է Հայաստանում հարցվածների ընտանիքից դուրս անձանց կողմից առնվազն մեկ անգամ իրականացված բռնության գործողությունների գումարային տոկոսները:

**Գծապատկեր Բ. Հայաստանում ընտանիքից դուրս բռնության գործողությունների տոկոսները**



Եթե հարցվածները «երբեք» պատասխանից բացի նշել են այլ տարբերակներ բռնության գործողություններ թվարկող ինքնուրույն լրացման քարտում, ապա նրանց տրվել են մի քանի լրացուցիչ հարցեր՝ բացահայտելու համար, թե ովքեր են եղել բռնացողները, արդյոք հարցվածներն ասել են որևէ մեկին իրենց հետ պատահածի մասին, արդյոք հարցվածներն ունեցել են վնասվածքներ դաժան վերաբերմունքի պատճառով, և, եթե ունեցել են, արդյոք դիմել են բժշկական օգնության այդ վնասվածքների պատճառով:

Ընտանիքից դուրս անձանց կողմից բռնության և ճնշման առնվազն մեկ գործողության ենթարկված հարցվածների մոտ 44 տոկոսը նշել է, որ հարևաններն են եղել բռնացողները, իսկ 25 տոկոսը նշել է, որ չի ճանաչում բռնարարներին (տե՛ս Աղյուսակ 17): Բռնության այդ

միջադեպերի ժամանակ հարևանները հիմնականում վիրավորել կամ հայիոյել են հարցվածներին:

Ընտանիքից դուրս անձանց կողմից բռնության առնվազն մեկ գործողության ենթարկված հարցվածների միայն մոտ 29 տոկոսն է հայտնել իր հետ պատահածի մասին որևէ մեկին (տե՛ս Աղյուսակ 18): Իրենց հետ պատահածի մասին նրանք հայտնել են ընտանիքի անդամներին, ընկերներին և ոստիկանությանը, ինչպես նաև նամակներ են ներկայացրել պետական պաշտոնյաներին և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ:

Այն հարցվածները, ովքեր ոչ մեկին չեն հայտնել իրենց հետ պատահած միջադեպերի մասին, բաց հարցի ժամանակ նշել են չհայտնելու պատճառները (տե՛ս Աղյուսակ 19): Այդ հարցվածների 30 տոկոսը նկատել է, որ այդ միջադեպի մասին որևէ մեկին հայտնելը չէր օգնի իրեն, 20 տոկոսը չէր հավատում, որ որևէ մեկը կարող էր օգնել, և մեկ այլ 20 տոկոսն ասել է, որ պարզապես չէր ցանկանում այդ միջադեպի մասին հայտնել որևէ մեկին:

Հարցվածները նշել են, որ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը, ընկերները և հետախուզության ծառայողը ամենաշատն են օգնել իրենց հաղթահարել այդ բռնությունը: Իր հետ պատահած միջադեպի մասին այլ անձանց հայտնած հարցվածների մեծ մասը չգիտի, թե այլ ինչ միջոցներ կարող էին օգտակար լինել բռնությունը հաղթահարելու համար:

Այն հարցին, թե ինչն է եղել ամենաօգտակարը իր հետ պատահած բռնության միջադեպը հաղթահարելու համար, հարցվածների կեսը պատասխանել է, որ ինքը, իր բնավորությունը և լավատեսությունն են եղել ամենաօգտակարը, մինչդեռ մեկ այլ կեսը հայտնել է, որ ոչինչ չի օգնել:

Հայաստանում ընտանիքից դուրս անձանց կողմից բռնության առնվազն մեկ գործողության ենթարկված հարցվածների մոտ 79 տոկոսն արդյունքում ունեցել է հոգեբանական դժվարություններ: Այնուհետև նշվել են գիտակցության կորուստ (21 տոկոս), կապտուկներ, քերծվածքներ, վերքեր (21 տոկոս) և խորը վերքեր կամ կտրվածքներ (14 տոկոս) (տե՛ս Աղյուսակ 20): Ընդհանուր առմամբ, բռնության ենթարկված հարցվածների մոտ 29 տոկոսն ունեցել է ինչ-որ տեսակի ֆիզիկական վնասվածքներ:

Բռնության հետևանքով վնասվածքներ ստացած հարցվածների մոտ 86 տոկոսին հարցրել են, թե արդյոք իրենք դիմել են բժշկական օգնության: Դաժան վերաբերմունքի պատճառով վնասվածքներ ստացած հարցվածների միայն մոտ 17 տոկոսն է դիմել բժշկական օգնության (տե՛ս Աղյուսակ 21):

Բժշկի կամ հիվանդանոց չդիմած հարցվածներին հարցրել են բժշկական օգնության չդիմելու պատճառների մասին: Հարցվածների 20 տոկոսը չէր դիմել բժշկական օգնության, քանի որ չի համարել այն լուրջ խնդիր: Մեկ այլ 20 տոկոսը չէր հավատում, որ որևէ մեկը կարող էր օգնել, իսկ ևս 20 տոկոսը վախենում էր այն հետևանքներից, որոնք կարող էին առաջանալ բժշկի կամ հիվանդանոց դիմելու դեպքում (տե՛ս Աղյուսակ 22):

### *Յետկոֆլիկտային բռնությունը քույրերի նկատմամբ*

Հարցվածների 73 տոկոսն ունի մեկ մորից ծնված առնվազն մեկ քույր: Քույրեր ունեցող հարցվածների հինգ տոկոսը հայտնել է, որ հակամարտությունից հետո իր քույրը կամ քույրերը ենթարկվել են ֆիզիկական բռնության ընտանիքից դուրս անձանց կողմից: Ֆիզիկական բռնության այդպիսի միջադեպերի թիվը տատանվում է մեկից մինչև երեքը՝ միջին հաշվով երկու անգամ: Քույրեր ունեցող հարցվածների երեք տոկոսը հայտնել է, որ



հակամարտությունից հետո իր քույրը կամ քույրերը ենթարկվել են սեռական բռնության ընտանիքից դուրս անձանց կողմից: Սեռական բռնության այդպիսի միջադեպերի թիվը տատանվում է մեկից մինչև երեքը՝ միջին հաշվով երկու անգամ: Ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված քույրեր ունեցող հարցվածներից ճշտվել է, թե ովքեր են եղել բռնացողները: Այդ միջադեպերի մեծամասնության ժամանակ բռնացողները անձանոթ անձինք էին:

### **Ընտանեկան բռնության չափերը**

Ինքնուրույն լրացման երրորդ քարտը ներառում էր չափորոշիչներ, որոնց նպատակն էր պարզել, թե արդյոք հարցվածները ենթարկվել են բռնության որևէ գործողության, ներառյալ հոգեբանական, ֆիզիկական և սեռական ճնշումները, իրենց ներկա ամուսինների կամ զուգընկերների կողմից:

Բոլոր 392 հարցվածների կեսից մի փոքր ավելին (54 տոկոս, n=213) ամուսնացած էր կամ ուներ զուգընկեր (տե՛ս Աղյուսակ 23): Ամուսնացած կամ զուգընկեր ունեցող հարցվածների 17 տոկոսը (n=37) ենթարկվել է հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բռնության առնվազն մեկ գործողության իր ներկա ամուսնու կամ զուգընկերոջ կողմից<sup>8</sup> (տե՛ս Աղյուսակ 27): Հարցվածների յոթ տոկոսը նշել է, որ ունեցել է այդպիսի միջադեպ ամեն օր կամ ամեն շաբաթ:

Այդ հարցվածների մոտ հինգ տոկոսը հայտնել է, որ իր ներկա ամուսինը կամ զուգընկերն ապտակել է իր դեմքին կամ ոլորել է իր ձեռքերը առնվազն մեկ անգամ, ընդ որում մեկ տոկոսն ունեցել է այդպիսի փորձ ամեն օր կամ ամեն շաբաթ: Հարցվածների մոտ երեք տոկոսը նշել է, որ իր ներկա ամուսինը կամ զուգընկերն իրեն հարվածել է բռունցքով կամ որևէ այլ բանով առնվազն մեկ անգամ, ընդ որում մոտ մեկ տոկոսն ասել է, որ ունեցել է այդպիսի փորձ ամեն օր կամ ամեն շաբաթ: Հարցվածների մեկ այլ երեք տոկոսին սպառնացել են վնաս պատճառել, ընդ որում մեկ տոկոսին սպառնացել են ամեն օր կամ ամեն շաբաթ:

Այդ հարցվածների 10 տոկոսը հայտնել է, որ իր ներկա ամուսինը կամ զուգընկերն իրեն ստիպել է մնալ տանը առնվազն մեկ անգամ, ընդ որում մոտ երեք տոկոսին արգելել են տնից դուրս գալ ամեն օր կամ ամեն շաբաթ: Հարցվածների ինը տոկոսը հայտնել է, որ իր ներկա ամուսինը կամ զուգընկերն առնվազն մեկ անգամ իրեն արգելել է զբաղվել հասարակական գործունեությամբ, սովորել, հաճախել կանանց կազմակերպություններ կամ աշխատել, ընդ որում մոտ վեց տոկոսն ասել է, որ ունեցել է այդպիսի փորձ ամեն օր կամ ամեն շաբաթ:


Այդ հարցվածների մեկ այլ ինը տոկոսը հայտնել է, որ իր ներկա ամուսինը կամ զուգընկերն իրեն վիրավորել կամ հայհոյել է առնվազն մեկ անգամ, ընդ որում մոտ երկու տոկոսն ասել է, որ ենթարկվել է այդպիսի գործողության ամեն օր կամ ամեն շաբաթ: Հարցվածների ևս ինը տոկոսն ասել է, որ իր ներկա ամուսինը կամ զուգընկերն իրեն արգելել է տեսնել ընկերներին կամ ընտանիքի անդամներին առնվազն մեկ անգամ, ընդ որում երկու տոկոսը հայտնել է, որ իրեն արգելել են ամեն օր կամ ամեն շաբաթ:

---

<sup>8</sup> 2007-ին ԹՀՀ-ի կողմից իրականացված Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ճնշման վերաբերյալ համազգային հարցման արդյունքները բացահայտել են, որ Հայաստանի կանանց մոտ 28 տոկոսը ենթարկվել է ընտանեկան ֆիզիկական ճնշման, և գրեթե 66 տոկոսը ենթարկվել է հոգեբանական ճնշման տանը: (Տե՛ս Դանիելյան Լուսիկ, Անի Դալլաթյան և Նարինե Հակոբյան (2007) Կանանց նկատմամբ բռնությունը և ճնշումը Հայաստանում. Համազգային հարցման արդյունքների գեկույզ: Երևան, Հայաստան: ԼԻՄՈՒՇ): 2007-ի համազգային հարցման և ներկա ուսումնասիրության արդյունքում բացահայտված ընտանեկան բռնության չափերի տարբերությունը կարելի է բացատրել տարբեր չափորոշիչներ օգտագործելու հանգամանքով:

Ներկա ամուսինների կամ զուգընկերների կողմից առնվազն մեկ անգամ իրականացված բռնության գործողությունների գումարային տոկոսները ներկայացված են Գծապատկեր Գ-ում:

**Գծապատկեր Գ. Ներկա ամուսինների կամ զուգընկերների կողմից բռնության գործողությունների տոկոսները**



Եթե հարցվածները «երբեք» պատասխանից բացի նշել են այլ տարբերակներ ներկա ամուսինների կամ զուգընկերների կողմից իրականացված բռնության գործողություններ թվարկող ինքնուրույն լրացման քարտում, ապա նրանց տրվել են մի քանի լրացուցիչ հարցեր՝ բացահայտելու համար իրենց ամուսինների կամ զուգընկերների դաժան վերաբերմունքի մանրամասները, ինչպես նաև պարզելու համար, թե ինչպես են իրենք պայքարել այդ վերաբերմունքի դեմ, և ինչն է եղել ամենաօգտակարը այդ բռնությունը հաղթահարելու ժամանակ:

Ներկա ամուսնու կամ զուգընկերոջ կողմից բռնության առնվազն մեկ գործողության ենթարկված հարցվածների մոտ 41 տոկոսը հայտնել է, որ բռնությունն սկսվել է ամուսնությունից մեկ տարի հետո, մինչդեռ 27 տոկոսն ասել է, որ վերաբերմունքը դարձել է դաժան անմիջապես ամուսնությունից հետո՝ մեկ ամսվա ընթացքում (տե՛ս Աղյուսակ 28):

Ներկա ամուսնու կամ զուգընկերոջ կողմից բռնության ենթարկված հարցվածներից երկուսը նշել են, որ ընտանիքի այլ անդամները նույնպես իրենց ծեծել են կամ ֆիզիկական ճնշում են գործադրել իրենց նկատմամբ (տե՛ս Աղյուսակ 34):

Բռնության ենթարկված հարցվածների միայն 24 տոկոսն է (n=9) նշել, որ փորձել է օգնության դիմել՝ իր ամուսնու կամ զուգընկերոջ դաժան վերաբերմունքի դեմ պայքարելու համար (տե՛ս Աղյուսակ 29): Այդ հարցվածների մոտ 78 տոկոսը դիմել է ընտանիքի անդամներին, իսկ 22 տոկոսը դիմել է ուստիկանություն:

Բռնության ենթարկված հարցվածների մոտ 76 տոկոսն չի դիմել օգնության համար, և չդիմելու ամենահաճախ նշված պատճառն այն է, որ հարցվածները չեն համարել այն լուրջ խնդիր (29 տոկոս): Հարցվածները նշել են նաև այլ պատճառներ, որոնք բացատրում են, թե ինչու իրենք չեն դիմել օգնության համար. հարցվածները համակերպվել են այդ խնդրի հետ (25 տոկոս), հարցվածները կարծում են, որ այդպիսի խնդիրները պետք է լուծվեն ընտանիքի ներսում (21 տոկոս), հարցվածներն ինքնուրույն են լուծել այդ խնդիրները (յոթ տոկոս): Աղյուսակ 30-ը ներկայացնում է այն բոլոր պատճառները, որոնք հարցվածները հայտնել են բաց հարցի ժամանակ:

Այն ինը հարցվածներին, ովքեր հայտնել են, որ դիմել են օգնության համար, տրվել են մի քանի լրացուցիչ հարցեր՝ պարզելու համար, թե որքան էր այդ օգնությունն օգտակար: Այդ հարցվածները նշել են, որ օգնության հասած անձանցից ամենաօգտակարն իրենց ծնողներն էին (56 տոկոս, տե՛ս Աղյուսակ 31):

Այն հարցին, թե ինչն է եղել ամենաօգտակարն իր ամուսնու կամ զուգընկերոջ դաժան վերաբերմունքի դեմ պայքարելու համար, հարցվածների մեծամասնությունը (78 տոկոս) պատասխանել է, որ ոչինչ չի օգնել (տե՛ս Աղյուսակ 32): Ի լրումն, օգնության դիմած հարցվածների մոտ 56 տոկոսը չի հավատում, որ որևէ այլ բան կարող էր օգնել հաղթահարել այդ բռնությունը: Քսաներկու տոկոսը կարծում է, որ ավելի լավ կենսամակարդակը կարող էր օգնել (տե՛ս Աղյուսակ 33):

### *Հարաբերությունները ներկա զուգընկերոջ հետ*

Ամուսնացած կամ զուգընկեր ունեցող հարցվածների յոթ տոկոսը հայտնել է, որ տեսել է իր ամուսնուն կամ զուգընկերոջը հարբած վերջին ամսվա ընթացքում, և միայն մեկ հարցված է նշել, որ իր զուգընկերն անցած ամիս եղել է թմրադեղերի ազդեցության տակ, այնպիսի թմրադեղերի, ինչպիսինն է հաշիշը:

Ամուսնացած կամ զուգընկեր ունեցող հարցվածներին տրվել է հարց այն մասին, թե ամսական որքան հաճախ են իրենք վիճաբանում կամ ինչ-որ տեսակի կոնֆլիկտ ունենում իրենց ամուսինների կամ զուգընկերների հետ: Հարցվածների 40 տոկոսը հայտնել է, որ երբեք չի ունեցել նմանատիպ կոնֆլիկտներ իր ամուսնու կամ զուգընկերոջ հետ<sup>9</sup>, իսկ հարցվածների գրեթե կեսը նկատել է, որ ունեցել է նմանատիպ կոնֆլիկտներ հազվադեպ (տե՛ս Աղյուսակ 24)<sup>10</sup>:

<sup>9</sup> Այս տոկոսը բարձր է թվում, սակայն հաշվի առնելով հարցաթերթիկի ենթատեքստը, մենք ենթադրում ենք, որ հարցվածները հասկացել են «կոնֆլիկտները» որպես դաժան միջադեպեր: Այս հարցը տրվել է դեմ առ դեմ հարցազրույցների և ինքնուրույն լրացման քարտերի վերջում, որոնց ժամանակ արդեն տրվել էին մանրամասն հարցերը բռնության գործողությունների վերաբերյալ:

<sup>10</sup> Իրենց ներկա ամուսինների կամ զուգընկերների հետ այդպիսի կոնֆլիկտներ երբեք չունեցած հարցվածների 95 տոկոսը չի ենթարկվել բռնության որևէ գործողության իր ներկա ամուսնու կամ զուգընկերոջ կողմից:

Իրենց ներկա ամուսինների կամ զուգընկերների հետ ինչ-որ տեսակի կոնֆլիկտներ առնվազն հազվադեպ ունեցած հարցվածներին տրվել է լրացուցիչ մի հարց՝ պարզելու համար, թե որոնք են եղել այդ կոնֆլիկտների հիմնական պատճառները: Հարցվածների 39 տոկոսը նշել է ֆինանսական խնդիրները: Մոտ 28 տոկոսը հայտնել է, որ ունեցել է ոչ լուրջ ընտանեկան վիճաբանություններ առանց որևէ պատճառի (տե՛ս Աղյուսակ 25 կոնֆլիկտների բոլոր պատճառների ցանկով):

Հարցվածների մեծամասնությունը (90 տոկոս) հայտնել է, որ, ընդհանուր առմամբ, վախեցած չէ իր ներկա ամուսնուց կամ զուգընկերոջից (տե՛ս Աղյուսակ 26):

### ***Վերաբերմունքը ընտանեկան բռնության նկատմամբ Հայաստանում***

Հայաստանում ընտանեկան բռնության խնդրի մասին հարցին պատասխանելիս հարցվածների գրեթե 46 տոկոսը համաձայնել է, որ «ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում», մինչդեռ մոտ 26 տոկոսը չի կարողացել պատասխանել այդ հարցին (տե՛ս Աղյուսակներ 39գ և 40):


Հարցվածների մեծամասնությունը՝ 56 տոկոսը, կարծում է, որ «բռնությունը կանանց նկատմամբ դեռ գոյություն ունի Հայաստանում, քանի որ հասարակությունն անտարբեր է բռնության ենթարկված կանանց նկատմամբ», ընդ որում 23 տոկոսը խիստ համաձայն է այդ կարծիքին: Մեկ այլ 23 տոկոսը չի կարողացել պատասխանել այդ հարցին (տե՛ս Աղյուսակ 39գ):

Հարցվածների 44 տոկոսը հայտնել է, որ «հայ հասարակությունն ավելի հակված է մեղադրելու սեռական բռնության ենթարկվածներին, քան բռնացողներին բռնության միջադեպերի համար», մինչդեռ 25 տոկոսը չի կարողացել պատասխանել այդ հարցին (տե՛ս Աղյուսակ 39է):

Հարցերի առանձին շարքի օգնությամբ փորձ է արվել պարզելու, թե արդյոք, հարցվածների կարծիքով, ամուսիններն ունեն իրական պատճառներ իրենց կանանց խփելու համար (տե՛ս Աղյուսակներ 35ա-35գ և Աղյուսակ 36): Գծապատկեր Դ-ն ներկայացնում է կանանց խփելն արդարացնող հարցվածների տոկոսները:

Հարցվածների 52 տոկոսը համաձայնել է, որ ոչ հավատարիմ լինելն արդարացնում է ամուսնու կողմից կնոջը խփելը: Հարցվածների մոտ 35 տոկոսը կարծում է, որ ամուսինը կարող է խփել իր կնոջը, եթե կասկածում է, որ նա հավատարիմ չէ: Այնուհետև նշվել են ամուսնուն չենթարկվելը (30 տոկոս), ամուսնու կարծիքով՝ տնային գործերը ոչ պատշաճ կատարելը (14 տոկոս), սեռական հարաբերությունները մերժելը (13 տոկոս) և ամուսնուն հարցնելը, թե արդյոք նա ունի այլ ընկերուհիներ (10 տոկոս):

**Գծապատկեր Դ. Կանանց խփելն արդարացնող հարցվածների տոկոսները**



